ՄԻԱՑՅԱԼ ԳԻՏԱԿԱՆ ՆՍՏԱՇՐՋԱՆ՝ ՆՎԻՐՎԱԾ Ս. Գ. ՇԱՀՈՒՄՅԱՆԻ ԾՆՆԴՅԱՆ 100-ԱՄՅԱԿԻՆ

Սյթ. Նոյեմբերի 15-ին տեղի ունեցավ միացյալ գիտական նստաշրջան՝ նվիրված կոմունիստական կուսակցության և սովետական պետության ականավոր գործիչ Ս. Գ. Շահումյանի ծննդյան 100-ամյակին։

Նստաշրջանը, որը կազմակերպել էին Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի կոմկուսների կենտրոնական կոմիտեներին առընթեր կուսակցության պատմության ինստիտուտները, ՀՍՍՀ գիտությունների ակադեմիան և Երևանի պետական համալսարանը, ներածական խոսքով բացեց ՀԿԿ Կենտկոմի քարտուղար Կ. Լ. Դալլաքյանը։ Նա մասնավորապես նշեց, որ Ս. Գ. Շահումյանի կյանքի ու գործունեության լուսաբանումը մեծ նշանակություն ունի մեր երիտասարդության դաստիարակության ասպարեզում։ Պատմական գիտությունների դոկտոր Հ. Ռ. Սիմոնյանի զեկուցումը նվիրված էր Ս. Գ. Շահումյանի գաղափարական-տեսական ժառանգության վերլուծությանը։ Ս. Գ. Շահումյանը, ընդգծեց զեկուցողը, մեր կուսակցության խոշորագույն տեսաբաններից էր, մեկն այն գործիչներից, որոնք մեծ Լենինի հետ միասին դրեցին մեր կուսակցության տեսական հիմքերը, հարստացրին բոլշևիզմի տեսական գանձարանը, տվեցին հեղափոխության առջև կանգնած բազում հարցերի պատասխանը։ Ս. Գ. Շահումյանն իր մատերիալիստական աշխարհայացքով, մինչև վերջ հետևողական, անբասիր ինտերնացիոնալիզմով փայլուն էջ գրեց բոլշևիզմի պատմության մեջ։

Բաքվի լեգենդար կոմունայի ղեկավար Ս. Գ. Շահումյանն իր ողջ պայծառ կյանքը նվիրաբերեց ժողովրդի երջանկության համար մղվող պայքարին։ Հեղափոխության պայքարի իր զինակիցների համար նա կուսակցական համոզվածության և հեղափոխական կրքոտության մարմնացում էր, իր ելույթում ասաց պատմական գիտությունների թեկնածու Ա. Ա. Հուսեյնովը (Բաքու)։ Իր ամենօրյա ստեղծարար գործունեության ընթացքում Բաքվի կոմունան միշտ ղեկավարվում էր ՌԿ(բ)Կ Կենտկոմի, Վ. Ի. Լենինի ցուցումներով, հենվում Սովետական Ռուսաստանի փորձի, աշխատավոր լայն զանգվածների ակտիվ աջակցության վրա։

«Ս. Գ. Շահումյանը և Վրաստանի բոլշևիկյան կազմակերպությունները» թեմային էր նվիրված պատմական գիտությունների դոկտոր Վ. Ն. Մերկվիլաձեի (Թբիլիսի) զեկուցումը։ Նա ասաց, որ Ս. Գ. Շահումյանն անկեղծորեն ու շերմորեն սիրում էր վրաց ժողովրդին, գիտեր նրա լեզուն, բարձր էր գնահատում նրա մշակույթը։ Վրաստանի աշխատավորները նրան պատասխանում են նույնպիսի անկեղծ սիրով, հիշելով թե նա որքան շատ բան է արել պրոլետարական շարժման զարգացման համար։ Ս. Գ. Շահումյանը Թիֆլիսի ռեալական ուսումնարանի սան էր, երբ հարեց հեղափոխական շարժմանը։ Նրա անմիջական մասնակցությամբ Թիֆլիսում ստեղծվեց լենինյան իսկրայական ուղղության առաջին անլեգալ սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունը՝ «Հայ սոցիալ-դեմոկրատների միությունը», որն այնուհետև միավորվեց ՌՍԴՐԿ Թիֆլիսի կոմիտեի հետ։ Ռուսական առաջին հեղափոխության տարիներին Ս. Գ. Շահումյանն ապրում և աշխատում էր Վրաստանում, անհողդողդ պաշտպանում հեղափոխության լենինյան տակտիկան, պրոպագանդիստական մեծ աշխատանք կատարում։

ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Գ. Ռ. Ղարիբջանյանն իր ելույթը նվիրեց Ս. Գ. Շահումյանի հեղափոխական գործունեության միջազգային նշանակության բացահայտմանը։ Նա փաստական նյութերի հիման վրա ցույց տվեց Ս. Գ. Շահումյանի ակտիվ մասնակցությունն արտասահմանյան բոլշևիկյան կազմակերպությունների գործունեությանը, նրա ծանոթությունը միջազգային բանվորական և կոմունիստական շարժման ականավոր գործիչների հետ։

Ականավոր հեղափոխականի՝ որպես ժողովուրդների բարեկամության շերմ ջատագովի մասին խոսեց ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Մ. Պ. Աղայանը։ Նա ընդգծեց, որ Ս. Գ. Շահումյանը նոր էջ բացեց հայ հասարակական-քաղաքական մտքի զարգացման ասպարեզում, գրեց հայ իրականության մեջ լենինյան մեծ դաղափար-

ների տարածման հիմքը։ Ի սկզբանե ինտերնացիոնալիզմի և ժողովուրդների բարեկամության մասին մարքսիստական ուսմունքը եղել է Ս. Գ. Շահումյանի աշխարհայացքի, նրա տեսական և պրակտիկ գործունեության հիմքը։ Նրա ողջ գործունեությունը խարսխված էր այդ սկզբունքի վրա։ Ս. Գ. Շահումյանի գլխավորած Բաքվի կոմունան զարձավ ժողովուրդների բարեկամության փայլուն օրինակ, որտեղ տարբեր ազգերի ներկայացուցիչները միասնական համախմբված ընտանիք էին կազմել։

Պատմական գիտությունների դոկտոր Խ. Հ. Բարսեղյանի զեկուցումը նվիրված էր Ս. Գ. Շահումյանի գործունեության ամենապայծառ էջերից մեկին՝ Վ. Ի. Լենինի հետ նրա նամակագրությանն ու հանդիպումներին։ Վ. Ի. Լենինի հետ 1903 թ. մինչև ծանոթանալը բացառիկ ազդեցություն գործեց Ս. Գ. Շահումյանի հեղափոխական ողջ գործունեության վրա։ Այդ ժամանակից ի վեր Վ. Ի. Լենինի և նրա միջև մշտական նամակագրություն է հաստատվում։ Իր ողջ հեղափոխական պայքարում, իր բոլոր խոհերով ու համոզմունքներով Ս. Գ. Շահումյանը Վ. Ի. Լենինի հետ էր։

«Ստեփան Շահումյանը ազգային հարցի տեսաբան» զեկուցմամբ հանդես եկավ պատմական գիտությունների դոկտոր Մ. Վ. Արզումանյանը։ Լինելով խոշոր մտածող, տեսաբան և գիտնական, ասաց նա, Ս. Գ. Շահումյանը հանդես է եկել որպես հասարակագետ-սոցիոլոգ, փիլիսոփա, պատմաբան, տնտեսագետ, իրավաբան և արվեստաբան։ Նրա բազմաշնորհ տաղանդը ցայտունորեն է դրսևորվել հասարակական գիտության տարբեր ճյուղերում։ Ազգային հարցի մասին նրա աշխատություններն աչքի են ընկնում բազմակողմանի մոտեցմամբ, պատմական հետազոտմամբ, սոցիալ-տնտեսական ու քաղաքական խոր վերլուծությամբ։ Նա այդ հարցը քննել է ամբողջ հասարակական կյանքի համալիրում։

Պատմական գիտությունների դոկտոր Լ. Ա. Խաչատրյանն իր ելույթում անդրադարձավ այն տակտիկային, որ Ս. Գ. Շահումյանը վարել է Անդրկովկասում սովետական իշխանության հաղթանակի համար մղված պայքարում։ Ելնելով երկրամասի սոցիալ-տնտեսական և ազգային առանձնահատկություններից, ասաց զեկուցողը, Ս. Գ. Շահումյանը մշակում է պայքարի վերին աստիճանի նուրբ և ճկուն տակտիկա ու Անդրկովկասի աշխատավորներին առաջնորդում դեպի սովետական իշխանության հաղթանակը։

Ս. Գ. Շահումյանի գրական հարուստ ժառանգության մեջ նշանակալից տեղ են գրավում մարքս-լենինյան քաղաքատնտեսության հարցերը։ Նշելով այդ փաստը, տնտեսական գիտությունների դոկտոր Ն. Գ. Թովմասյանն ընդգծեց, որ Ս. Գ. Շահումյանի աշխատություններն ընդգրկում են մեծ թվով պրոբլեմներ։ Նա հետևողականորեն պաշտպանում էր մեկ երկրում սոցիալիստական հեղափոխության հաղթանակի մասին լենինյան ուսմունքը, որ հենվում էր իմպերիալիզմի դարաշրջանում կապիտալիզմի տնտեսական ու քաղաքական անհամաչափ զարգացման ուսմունքի վրա։

Բանասիրական գիտությունների դոկտոր Ս. Ա. Մանուկյանի զեկուցումը նվիրված էր «Ս. Գ. Շահումյանը և հայկական մարքսիստական գրաքննադատության սկզբնավորումը» թեմային։ Զեկուցողը նշեց, որ Ս. Գ. Շահումյանը եղել է լենինյան դպրոցի տեսաբան մարքսիստ, փայլուն հրապարակախոս, խոհուն լրագրող, մամուլի տաղանդավոր կազմակերպիչ։ Նա իրավամբ համարվում է մարքս-լենինյան գեղագիտական մտքի փայլուն գիտակ, հայ մարքսիստական գրական քննադատության հիմնադիր։ Ս. Գ. Շահումյանը անդրադարձել է հոգևոր մշակույթի հարցերին և մշտապես գտնվել հեղափոխական պայքարի հորձանուտում։